ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 18 փետրվարի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Խաչատրյանի
Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի
Կ. Բալայանի

Քննության առնելով «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության և «Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան հասարակական կազմակերպության անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 42.1-րդ հոդվածի՝ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպությունը և «Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը 2015 թվականի հունվարի 29-ին դիմել են ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 3-րդ մասը և 46-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և 4-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 2, 3, 4 և 18-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

1. Դիմողները գտնում են, որ այն եղանակը, որով ընտրական հանձնաժողովները և դատարանները քննության են առել բողոքները, չի ապահովել իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ, և կարծիք են հայտնում, որ ընտրական հանձնաժողովները և դատարանները պետք է ձեռնպահ մնան դիմումների և բողոքների քննությունը մերժելուց:

Դիմողների կարծիքով՝ «...դիտորդությունը խիստ կարևոր առաքելություն է և լրացուցիչ վերահսկողական երաշխիք ընտրությունների օրինականության նկատմամբ՝ Սահմանադրության 4-րդ հոդվածին համապատասխան անցկացվելու նկատմամբ»: Սակայն ՀՀ ընտրական օրենսգրքի վերը նշված հոդվածների դրույթները դիտորդին փաստացի զրկում են վարչական մարմնի որոշումներն ու դիտարկած ընտրախախտումները գրանցամատյանում չգրանցելու փաստը բողոքարկելու հնարավորությունից, ստեղծելով մի իրավիճակ, որում դիտորդի՝ դիտարկում ներկայացնելու իրավունքը չի ապահովվում վարչական մարմնի կողմից այն արձանագրելու պարտականությամբ:

Դիմողները միաժամանակ սահմանադրական դատարանին խնդրում են ազատել պետական տուրքի վճարումից կամ տարաժամկետել դրա վճարումը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հասարակական կազմակերպությունները ոչ առևտրային և շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություններ են:

2. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով, դատական կազմը գտնում է, որ առկա են դիմումի քննության ընդունումը մերժելու հիմքեր՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի և 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունն իրավասու չէ դիմելու Սահմանադրական դատարան, քանի որ նրա նկատմամբ գործը լուծող դատական ակտեր չկան: Հետևաբար, առկա են դիմումի քննությունը «Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան հասարակական կազմակերպության մասով մերժելու հիմքեր:

Այսպես, դիմումի և կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմող «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպությունը չի ներկայացրել պատշաճ իրավական

հիմնավորումներ վիճարկվող դրույթների ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը՝ որպես անհատական դիմումի ընդունելիության պարտադիր պայման, սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չէ խնդրո առարկա իրավադրույթների ենթադրյալ հակասահմանադրականության որևէ հիմնավորում:

Միաժամանակ, դիմողը նաև չի հիմնավորել, թե վիճարկվող նորմերի «հակասահմանադրականության» արդյունքում իր սահմանադրական որ իրավունքն է խախտվել, ինչպես նաև չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթների հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի և ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ-839 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման՝ անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:

Բացի դրանից, դիմողի համար առաջացած անբարենպաստ հանգամանքներն ընդամենը նրա նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտի արդյունք են: Հետևաբար, վերոնշյալ իրավադրույթների սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ընդամենը բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն ներկայացնել վիճարկվող դրույթների հակասահմանադրականության վիճարկմամբ:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշման մեջ արտահայտել է իրավական դիրքորոշում, ըստ որի՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ: Հետևաբար, առկա է դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմք:

Միաժամանակ, դատական կազմն արձանագրում է, որ դիմող «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության նկատմամբ չի կիրառվել ՀՀ ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 6-րդ կետերով և 69-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 7-րդ մասերով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

«Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան հասարակական կազմակերպության և «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

18 փետրվարի 2015 թվականի
ՍԴԴԿՈ/2-5